Հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի

և իրավունքի ինստիտուտի

տնօրենի պաշտոնակատար՝ Անահիտ Ջիջյան,

«_____»

«23» 03 2022թ.

Առաջատար կազմակերպության կարծիքը

Դենիլխանով Շամու Շահմանի

«Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները բնակչության տրանսպորտային սպասարկման և ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ոլորտում» թեմայով ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող ատենախոսական աշխատանքը նվիրված է ՌԴ-ում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները բնակչության տրանսպորտային սպասարկման և ճանապարհային երթևեկության անվտանգության **ապահովման հետ կապված հիմնախնդիրների ուսումնասիրությանը:**

Ատենախոսության հետազոտության թեմայի արդիականությունը, պայմանավորված է նրանով, որ տրանսպորտը, ներառյալ հասարակական տրանսպորտը, կարևոր դեր է խաղում ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ առանձին համայնքների տնտեսության ձևավորման և զարգացման մեջ՝ դրանով իսկ ունենալով ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Տեղական բնակչությանը տրանսպորտային ծառայություններ մատուցելը, սոցիալական նշանակություն ունեցող օբյեկտների և հաստատությունների մտության հասանելիության հնարավորությունը, ինչպես նաև հաշմանդամների և սահմանափակ հնարավորություններով անձանց անկախության բարձրացումը հասարկության մեջ բացահայտում է տվյալ ծառայությունների հասարակական նշանակությունը կոնկրետ տեղական ինքնակառավարման միավորի շրջանակներում:

Այնուամենայնիվ, ավտոմոբիալային տրանսպորտի տարբեր տեսակների արագ և համատարած զարգացումը բերել է ճանապարհատրանսպորտային պատահարների թվի աճի և, որպես հետևանք ճանապարհային վնասվածքների թվերի բարձրացման:

Ինչպես ցույց է տալիս ռուսաստանյան պրակտիկան, համայնքների սահմաններում բնակչությանը տրամաֆրվող տրանսպորտային ծառայություններն ավելի արդյունավետ և ցանկալի են, քան անձնական տրանսպաորտի լայն կիրառումը, որն էլ իր հերթին դառնում է խցանումների հետևանք: Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բնակչությանը տրանսպորտային ծառայությունների մատուցման խնդիրը, որպես տեղական հարցի լուծում, չի կարող դիտարկվել ճանապարհային անվտանգության շրջանակներից դուրս: Այսպիսով, մի կողմից՝ բնակչության տրանսպորտային ծառայությունների բարելավումը, շարժակազմի նորացումը և ուղևորափոխադրման ժամանակի կրճատումը սերտորեն փոխկապակցված է անձնական ավտոմոբիլային տրանսպորտից օգտվող մարդկանց թվի նվազումով, հետևաբար՝ ճանապարհների վրա ստացված վնասվածքների նվազումով, ինչը վնաս է հասցնում ինչպես բնակչության, այնպես էլ քաղաքային իշխանություններին:

Քննարկվող ատենախոսության հետազոտության նպատակն ու խնդիրներն են՝ համակողմանիորեն դիտարկել տեղական ինքնկառավարման մարմինների՝ տեղական բնակչությանը փոխադրելու և ճանապարհային անվտանգությունն ապահովելու լիազորությունների հարցը՝ հաշվի առնելով այլ գիտական ճյուղերում առկա հետազոտությունների արդյունքները, ինչպես նաև առաջարկություններ մշակել այդ ոլորտներում տեղական ինքնկառավարման մարմինների գործունեության կարգավորիչ և տնտեսական բազայի բարելավման համար: Այս նպատակին հասնելու համար սահմանվում են համապատասխան կոնկրետ խնդիրներ:

Սույն ատենախոսական հետազոտության գիտական նորույթը հիմնավորվում է այն նպատակներով, որոնք պետք է ձեռք բերվեն և այն խնդիրներով, որոնք լուծվեն ատենախոսական հետազոտության արդիական թեմայի քննարկման արդյունքում:

Ատենախոսական հետազոտությունը իրենից ներկայացնում է համաապարփակ ուսում Նասիրություն տեղական ինքնակառավարման մարմինների բնակչությանը

ծառայություններ տրանսպորտային ծառայություններ և ճանապարհային անվտանգությունն ապահովելու լիազորությունների խնդրի վերաբերյալ՝ որպես փոխկապակցված երևույթների: Այսպիսով, հայցորդը համալիր կերպով վերլուծում է երկուբ տեսակի լիազորություններ, ինչը ենթադրում է կատարված եզրակացությունների և ուսումնասիրված ոլորտներում կատարելագործման հնարավորությունների միասնության մասին: Այսպիոսվ, այս ատենախոսական հետազոտությունը միակն է, որն առաջարկում է համապարփակ մոտեցում՝ բարելավելու թե՛ տեսական, թե՛ գործնական տեղական իշխանությունների լիազորությունները՝ նմանատիպ տեղական նշանակության հարցերի լուծման համար:

Հետազոտության գիտական և գործնական նշանակությունը: Այս ատենախոսության հետազոտության ընթացքում արված եզրակացությունները լրացնում են ուսումնասիրվող ոլորտներում արդեն իսկ գոյություն ունեցող տեսական և գործնական գիտելիքները: Իր հերթին, ատենախոսությամբ առաջարկվող մնացած խնդրահարոցյց հարցերի լուծման ուղիները կնպաստեն բնակչությանը մատուցվող տրանսպորտային ծառայությունների ավելի ընդլայնված մունիցիպալացմանը և ճանապարհների անվտանգության ապահովմանը, ինչպես նաև այս մակարդակի հանրային իշխանության հետաքրքրությանը, այդ թվում նաև ֆինանսական տրանսպորտային ծառայությունների որակի բարձրացման և ճանապարհային անվտանգության արդյունավետության ապահովման մասով:

Ուսումնասիրության արդյունքների հիման վրա արված եզրակացություններն ու առաջարկություններն ուղղված են Ռուսաստանի Դաշնության օրենսդրության կատարելագործմանը, որը կարգավորում է բնակչության տրանսպորտային ծառայությունների ոլորտում տեղական ինքնկառավարման մարմինների լիազորությունների իրականացումը և ճանապարհների անվտանգության ապահովումը:

Քննարկվող ատենախոսության հետազոտության մեջ մշակված առաջարկությունները կարող են օգտագործվել իրավակիրառ պրակտիկայում և հաշվի առնվել քրեական օրենսդոությունը կատարելագործելիս:

Ատենախոսության սեղմագիրը արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված

գիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում հեղինակի հրատարակված ինը հոդվածները լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Վերոնշյալի հետ մեկտեղ պետք է արձանագրել, որ աշխատանքը զերծ չէ որոշակի բացթողումներից և թերություններից, որոնք հանգում են հետևյալին.

Հետազոտության թեման այնքան էլ հաջողված և չիշտ ընտրված չէ, քանի ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման գործառույթը ՌԴ-ում, որքան հայտնի է, իրականացնում է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման կենտրոնական գերատեսչական և մունիցիպալ ոստիկանական մարմինները, բայց ոչ թե տեղական ինքնակառավարման մարմինները:

Քանի որ ՌԴ-ը դաշնային պետություն է և յուրաքանչյուր սուբյեկտ ունի իր օրենսդրական կարգավորումները տվյալ բնագավառում, ապաս գտնում ենք, նպատակահարմար կլիներ հետազոտության օբյեկտը դարձնել մեկ ինքնավար հանրապետությունը կամ մարզը, որպեսզի հետազոտությունը առավել կոնկրետ լիներ և արդյունքները առաբվել շոշափելի:

Նշված թերությունները ավելի շուտ ցանկություններ են և բնավ չեն ազդում ախատանքի դրական արժանիքների վրա:

Ելնելով վերոշարադրյալից, գտնում ենք Դելիխանով Շոմու Շամխանի ԺԲ.00.02 «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները բնակչության տրանսպորտային սպասարկման և ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ոլորտում» թեմայով ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ,բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական նառավարում) մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը լիվին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի՝ 2022

թվականի մարտի 23-ի նիստում, որին մասնակցել են իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Մ. Ստեփանյանը, գլխավոր գիտաշխատող, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Հ. Սաֆարյանը, ավագ գիտաշխատող, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա.Վ. Շուքուրյանը, Ա.Ա. Աբրահամյանը, Բ.Վ. Ղազինյանը, Լ.Ա.Ղազանչյանը:

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի պետաիրավական
հետազոտությունների բաժնի վարիչ,
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Հ.Մ.Ստեփանյան**